


ՏՆՕՐԵՆ-ՆՄՔԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՆՓՈՒՐ

Նամակ կամ որ եւ է գրութիւն
պէտք է ուղղել առ

ՆՄՔԱԳՐՈՒԹԻՒՆ ՓՐՈՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Մուրուր, ԳԱԶԻՐԷ

Direction du journal PAROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եկիպտոսի համար տեղեկ. ողջ դի. 80
» » վեցամսեայ » 50
Չսար երկիրներ տարեկան Գրանք 25
» » վեցամսեայ » 14
Թղթասարի ծախքը խմբագրու-
թեան վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ նա-
մակ կամ այլ գրութիւն եւ չի տրուիր :

ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ ազգ. թերթերուն մէջ կը կարգանք
հետեւեալ տեղեկութիւնը որ Պատրիարքա-
րանի կողմէ հաղորդուած կէս-աշտօնական
հրատարակութեան մը հանգամանքն ունի.

«Դատական նախարարութիւնէն Պատրի-
արքարան ուղղուած պաշտօնագիր մը, կայս-
«Իրաւէի մը համաձայն, կը ծանուցանէ թէ
«անցեալները գաղթած անձերէն անոնք որ
«Պոլսոյ մէջ առնու, ընտանիք եւ գործ ունին,
«կարող են դառնալ, իրենց մասին Պատրիար-
«քարանի կողմէ ապահովութիւն տրուելով եւ
«երաշխաւոր ցուցուելով»:

Այս արտօնութեան լուրը բնականաբար
կը հետաքրքրէ այն գաղթական հայերը որոնք
1896 սեպտեմբերէն ի վեր առնու տեղ ու գործ
ձգած՝ օտար երկիրներու մէջ կը գեղեցիկ
միմիայն Եգիպտոսի մէջ հարկերէն կը համ-
բուին ասանկներ : Գաղթականներու այն մա-
սը որոնք իրենց գտնուած նոր միջավայրին
մէջ ապրուստի միջոց մը հայթայթած ու ամ-
փոփ կերպով հաստատուած են, առանց ո՛ր
եւ է ընտանեկան կամ նիւթական կապ ու-
նենալու Պոլսոյ հետ, միաբերնուն չեն անցունք
վերադառնալ. մեր խօսքն անոնց համար է
որ այս պայմաններէն զուրկ կը գտնուին դժ-
բաղդաբար եւ դրեթէ յուսահատած են :

Տրուած արտօնութիւնը այնքան լայն չէ,
ինչպէս կը տեսնուի, ու պայմանաւոր. բայց
վերջապէս դիւրութիւն մըն է ուսկից ուղղոր
եւ կրցողը պիտի օգտուի. դեռ երկու երեք
շաբաթ առաջ վառնայէն Պոլիս գարձած
խումբ մը հայեր չէին ընդունուած ու հար-
կադրուած էին նոյն չղգենաւով եւ դառնալ-
հիմակ, կերեւայ թէ այս անհաճոյ դէպքերը
չի պիտի կրկնուին, բաւական է որ մարդ մը
հաստատէ թէ Պոլսոյ մէջ առնու, ընտանիք եւ
գործ ունի, երաշխաւորութիւն մը տայ ու
Պատրիարքարանն ալ նպատաւոր յանձնա-
րարութիւն ընէ անոր մասին :

Անշուշտ այս միջոցիս թէ՛ Պոլսկալիցի եւ
թէ՛ այն ամեն երկիրներու, — ուր մեծ թուով
ու ճարահատած գաղթականներ կան, — ազ-
գային հոգեւոր իշխանութիւնները, թաղա-
կան խորհուրդները կը մտածեն թէ ի՞նչ պէտք
է ընեն. Եգիպտոսի Առաջնորդարանն ալ ունի
այս տեսակ պարտականութիւն մը, գտնէ իր
չըլտիական մէջ պատասխարուած խեղճ գաղ-

թականներուն հանդէպ որոնց տրուած պահիր
— հայն ալ գաղթեցողին : Մեր կարծիքով,
ամենէն գործնական ու բանաւոր ճամբան է,
առանց ժամանակ կործնելու զրեւ Պատ-
րիարքարանին եւ ապահովութիւնն առանալ թէ
հրապարակաւ ծանուցուած դիւրութիւնը պի-
տի տրուի իրականապէս եւ թէ Պատրիարքա-
րանը տէր պիտի կենայ գարձաններուն : Յե-
տոյ, կարգը կուգայ դրամական խնդրին, ու-
ղեւորութեան ծախքերուն, վասն զի գաղ-
թականներ կան որոնք ասկից Ալեքսանդրիա
երթալու չափ ալ ստակ չունին. դժուար չէ
ասկայն վերջին դիմում մըն ալ ընել երկու-
թուրոյ վարչութեան ու շողենաւային ըն-
կերութիւններուն, 30 առ 100 զեղչով տոմ-
սակ ստանալու համար, ինչպէս քանիցս եւ
զաւ անցեալ տարի :

Առաջնորդարանի վարչներուն լուրջ ու-
շաղջութիւնը հրաւիրելով այս խնդրին վրայ,
կը հաւատանք թէ հրապարակաւ թարգման
հանդիսացած կրկնաք գաղթականներու այն
մասին որ իր տեղը գառնալ կը փախաղի, —
վասնզի այդ արամադրութիւնը չունեցողներ
ալ կան, թէեւ անգործ մնացած :

Այս վերջիններուն նկատմամբ ըսելիք
չունինք. ազատ են. ո՛չ ոք պէտք է աղդէ
անոնց մտածելու եղանակին վրայ, յարգե-
լով իրարանցիւր անհատի ըմբռնումը իր կեան-
քի ապահովութեան մասին : Իսկ անոնց հա-
մար որոնք ինքնաբերաբար ու յօժար կամքով
կուլեն երթալ, բարոյական ու նիւթական
պաշտպանութիւն կը սպասուի Առաջնորդա-
րանէն ինչպէս նաեւ Ալեքսանդրիայ թաղ-
խորհուրդէն : Եգիպտոսի հայերը շատ վե-
հանձն ու մարդասէր գտնուեցան այս գաղ-
թային հոսանքին բերած թշուառութիւննե-
րուն առջեւ, պէտք է խոստովանիլ, ու այդ
գլխաւոր մէկ նոր ապացոյցն ալ չի պիտի
զրկուի, կը յուսանք :

ԱԿԱՄԱՅ ԴԵՐՈՍԸ

(ԻՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Շարունակութիւն Նախորդ թիւէն

Ը.

Իրիկունը նորէն գող ու տարութիւն եկաւ վրաս
եւ այսպէս՝ հիւսիսէ ինկած՝ երկու ամիս անկողին
մնացի : Նոյեմբերի վերջերը սար եկաւ եւ կրցայ սեն-
եակիս մէջ քաշել, թէեւ շատ տկար էի տակաւին :

Աժէն օր կամուսններ կուգային կանչելին գե-
ղին : Իրենցմէ խաղայ որ մեք խումբը Ռէթիոնի
չըջակաները կը գտնուէր եւ միշտ կուրի մէջ էր թու-
քերուն հետ :

Գեղեցիկներ 17ին էր՝ երբ Եվանիկիտս անեակիս
մանկով սարսուռութեամբ գալեց :

— Աչքդ լոյս, քուկիներդ եկան : Ամենքն ալ
աղջ տաղջ :

Յետոյ, ուսիս գործնելով՝

— Մե՛ք օր դուռն հետ չէիր : Շատ թուրք
կտրեր են :

Յետեւը իր խանութատեղեան մէջ էր տա-
կալին երբ Գարիթան վառու ներս մտաւ :

Արհատարհական բարեւ մը տալէ ետքը ինծի,
ախ՛ա մը առաւ ու սեղանին բով նստաւ :

Գարիթանին ինծի բլամ այս պող ընդունե-
լով ինքը սկսաւ բիշ մը մտածուր պատճառել ինծի :
Յանցաւորի դիրքով մը սենեակին մէկ անկիւնը քաշ-
ուեցայ :

— Հայր Եվանիկիտս, ըսաւ Գարիթանը ամե-
նալուրջ ձայնով մը, ախ՛ա մը ա՛ռ ու քոյս նստէ՛,
խօսելիք ունիմ :

Արիթէն օգուտ քաշել ուղեցի կծիկը դնելու
համար, ուստի անմիջապէս վրայ բերի, խաբս ան-
բնաւոր երկարին ալ ուղղելով :

— Ես դուքս կելլամ ուրեմն, մեր խօսքին արգելք
չըլլամ :

— Ո՛չ, հոս կեցիր, սրտատախտեց վառու խիստ
կերպով : Աթոս մը ա՛ռ, ու դուռն ալ նստէ՛ :

Ծանրակշիւ բան մը կար գլխիս վերեւը, բայց
չէի կրնար կոր ի՞նչ ըլլալը հասկնալ :

Երեքս ալ նստեցանք սեղանին շուրջը, Նեղա-
ցուցիչ լուծիւն մը կը տիրէր սենեակին մէջ : Վեր-
ջապէս Գարիթանը սիկարա մը վառեց, հատ մըն ալ
Եվանիկիտսին հրամայեց եւ սկսաւ խօսիլ :

— Հայր Եվանիկիտս, մենք քանի մը օրէն պիտի
վերադառնանք Աթէնք : Գիտես որ Գարիթաններու
սովորութիւնն է իրենց հետ եղող կամուսններուն
մէջմէկ վկայական տալ եւս գարձած ժամանակին,
որուն մէջ կը գրուի քանի անգամ կուրի մէջ մըտ-
նալին եւ քանի հոգի գարնելին, ինչպէս նաեւ տե-
ղեկութիւններ իրենց վարքին ու ընթացքին մասին :

— Գիտեմ որ այդ սովորութիւնը կայ եւ շատ
օրինաւոր է, պատասխանեց Եվանիկիտս, այդ վկա-
յականներուն տակ շատ անգամ ես ալ ստորագրած
եմ իբրեւ տկանատես :

— Իմ հրամանիս տակ գտնուող ամէն կամուսն-
ներուն տուր այդ վկայականներէն, չարանակեց Վա-
նաս. որդ ինչդիր մը կը մնայ հիստ :

— Ի՞նչ :

— Ի՞նչ պիտի ընենք այս մարդը եւ վառու մա-
տին ծայրով ինծի ցոյց տուաւ :

Եվանիկիտս ոտքը սարին վրայ դրաւ, մօրու բը
ձեռք տուաւ եւ մտած կտու կերպարանքով մը մըտայ :

— Իրաւունք ունիս. ի՞նչ պիտի ընենք . . . :

Հարկ դատեցի միջամտել :

— Ես, ըսիս հոգիս թէ սուրս կրկնէ գրի՛ սաք-
լիւնանէ հիւսնի պատկերաց, անոր համար վիս պէտք
չէ որ կամուսններուն մէջ գտնեք :

— Ի՛յ, դուայ վառու խառութեամբ, կուլե՛ս
որ բեզի այդպէս եւս գարձանք սրտեղի միւս փա-
րկութիւնները վրաս ինչպէս եւ ըսեն ի՞նչ՝ վառուսի
տարած մարդիկը բան մը չըրին ու հիւսնի պատ-
կերան կրկնէին մէջ :

—Ուրեմն ես հաս կը մնամ, պատասխանեցի երկչուտ ձայնով մը, ու ետքէն առանց Աթէնք հանդիպելու ուրիշ տեղ մը կերթամ:

—Այո՛, գոչեց նորէն Վանոս ձայնը աւելի բարձրացնելով, որպէսզի միւս Քարիթիանները ըսեն թէ՛ Վանոսի տարած մարդիկը կրէտէի մէջ մեռած են:

—Ուրեմն ի՞նչ ընեմ, մըստացի շուարած:

—Պէտք է որ բնզի ալ վկայական մը տամ, պոռայ Վանոս ձեռքը սեղանին վարնելով:

—Այո՛, իրեն ալ վկայական մը տանք, գործը լմնայ, առաջ բերու է վանկէլիոս:

—Հատ աղէկ է թէ այդպէս հրաման կընէք ու հարկ կը տեսնաք, պատասխանեցի համակերպելով:

Էվանկէլիոս գնաց թուղթ գրիչ բերելու:

—Անուղ ի՞նչ է, հարցուց Վանոս:

Քիչ մնաց «Յակոբ» պիտի պատասխանէի ըսաց յանկարծ խեղճ ըրի որ լաւագոյն պիտի ըլլար կեղծ անուն մը տալ:

—Վարդան կայծուէի:

Էվանկէլիոս ներս մտաւ:

—Ես ըսեմ զուն գրէ՛, հրամայեց Վանոս տէր տէրին և սաքի կէլելով սկսաւ ժուռ գալ սենեակին մէջ:

—Պատրաստ եմ:

Եւ Վանոս տուն տուաւ:

—«Այս վկայականը կրող անձը հայ յեղափոխական մըն է և Վարդանոս կը կոչուի: Իր հայրենիքին մէջ տարիներով թուրքերու հետ կռուելէ ու շատ մը նշանաւոր ու վարմանալի քաջութիւններ ընելէ ետքը Աթէնք եկած և խնդրած է մենէ որ պէսզի հետերնիս կրէտէ գայ:

«Կրէտէի մէջ երեք ամիս մնացած է և մեզի հետ մասնակցած է երեսունեակու կռիւի ինը թուրք զարկած է՝ որոնց հինգը մեռած են»:

Քարիթիան Վանոս լռեց:

—Մասնաւոր դէպք մը պէտք է պատմել, ըսաւ Էվանկէլիոս, ընդհանրապէս անունի կընէիք աւ մենուն հոռւար:

—Իրաւացի է, մուսայ այդ կէտը:

Եւ Վանոս շարունակեց:

«Վարդանոս, անգամ մը, Քոլքիթիայի մօտ, գիշերանց թուրք զինուորներու քանակատեղին զընաց և վստօղի երեք սնտուկներու կրակ տուաւ ու օղը հանեց»:

—Բայց Քարիթիան, համարձակեցայ ըսել այդ պատմութիւնը կարգացողը պիտի ըսէ որ վստօղի սնտուկներուն հետ պէտք էր որ ես ալ օղը ելած ըլլայի:

—Դուն ալ կարգացողին կըսես որ չես ելած քանի որ ողջ առողջ դէմը կեցած ես, պատասխանեց Վանոս իր սովորական խտտութեամբ:

—Ան ալ պատմութեան ստուգութեանը պիտի կասկածի:

—Բարբիթի մը երեք չկասկածիր թուրքերու դէմ ելած հերոսական դէպքի մը ճշգրտութեան վրայ: Հասկացայ որ անկարելի էր այս մարդուն հետ վիճարանիլ ու լռեցի:

Վկայականը ստորագրուեցաւ Վանոսին ու տէր տէրին կողմէ: Յետոյ Էվանկէլիոս զիրը կեղծելով ուրիշ քանի մը ստորագրութիւններ ալ աւելցուց:

Թ.

Մեզի Յունաստան փոխադրելիք նաւը դեկտեմբերի վերջերը եկաւ ու դարձեալ գիշերանց Ուրասայէն նաւ մտանք եւ այս անգամ երեք օր փոթուրիկ կրելէ ետքը՝ հասանք Բիրէի նաւահանգիստը:

Փառաւոր ընդունելութիւն մը ըրին մեզի: Հաւաքուաւոր յայտեր շարուած էին քարափներուն վրայ երբ ցամաք ելանք. ամէն կողմէ «Ալիթ» կը պոռային ու կողպէին մեզի գրիւլու և համբարելու: Այս ցոյցերէն այնչափ յուզուեցայ որ աշուրներս լեցան:

Աղէ՛կ բան է եղեր հերոս ըլլալը:

Հանդիսական թափօրով մեզի կը տանին եկեղեցի, յետոյ ամէն մարդ կը ցրուի ու ես ալ կը դառնամ հայերուն լուս. որոնք արդէն եկեղեցիին բակը ինծի կը սպասէին:

Կը մոզմունք փաշա Ալմանիի մօտ առանձին տեղ մը, ամէնքն ալ կուգեն զիս գրիւլ ու համբարել:

Երբ ամէնքն կը նստինք՝ մօրուսաւոր հայ մը գրպանէն թուղթ մը կը հանէ ու կը կարդայ:

«Բարի եկար, ո՞վ քով հայկազուն, քո փառացի դափնիներդ որոնք խլեցիր արիւնալից դադրին վրայ, ժանտ թուրքերու դէմ՝ կռուելով, մեր ամե-

նուն ճակտին շուրջը կը պլլային: Քո անունը ոսկի տառերով պիտի բռնադրուի ամէն հայու սրտին մէջ և քո յիշատակը զարեգար պիտի անցնի, ո՞վ անձնուէր հերոս, պարծանք թարգմտեան ազգատոհմին, պատիւ ազգութեան, պատիւ մարդկութեան, պարծանք հայութեան, եւն»:

Հագիւ թէ մօրուսաւորը թուղթը ծալած էր, ուրիշ երկտասարդ մը մէջտեղ նետուեցաւ ու սկսաւ պոռալ:

«Վերադարձաւ քով հայրուրին, կրէտէն արդ յաղթական, Զարդեց, կորեց, վուեց դետին՝ Ամրոջը բանակ վատ թրքական»:

«Իրեւա առիւծ քաջաբաւայ Յարձակեցաւ նա լայնարձարծ, Արձակեցին թուրք օլոր ու լայ, Յորժամ տեսան զանի յանկարծ»:

«Սարափեցաւ թրքաց բանակ, Զօրավարը վախէն դուրս, Երբ լուեցաւ աշխարհ համակ, թէ՛ հայորդին կիրիտ գնաց»:

«Ամրոջը դահլիճը եւրոպական կործեցան հիմնադատակ, Եւ նախարար՝ ափի բերան՝ Ծածկուեցան սեղանին սակ»:

Երբ ոտանաւորն ալ լնացաւ, ներկաները ինծի դարձան և միտերտն ըսին:

—Հիմա պատմէ նայինք ըրածներդ:

Իրաւ որ մտքս անցաւ ամեն բան շիտիէ չիտակ խտտութեանի իրենց, բայց մեղքացայ զիրենք. ամրոջը այդ խանդավառութեան վրայ պարզ ջուր մը լեցուցած պիտի ըլլայի:

—Նախ վկայական կարգացէր, ըսի:

Մէջերէն մէկը որ յունարէն գիտէր, առաւ կարգաց ու թարգմանեց:

Ընդհանուր ծափահարութիւն մը որոտաց:

—Ապրի՛ս, կեցցէ՛ հայրենիք, կեցցէ՛ Հնչակեան կռուակցութիւն, կեցցէ՛ Գաշտակցական կռուակցութիւն, կեցցէ՛ միութիւն, կեցցէ՛, կեցցէ՛...:

Ու ամէնքը նորէն եկան ճակատա համարելու: Յետոյ մանրամասնօրէն պատմեցի թէ ինչպէս քարերուն ետեւ պահուցած ամիսներով կռուեր էինք թուրքերուն դէմ, թէ ինչպիսի գիշերանց դայեր կրակի տուեր էի վստօղներու սնտուկները, եւայլն:

Երբ մութը կոխեց, վերադարձանք Բիրէ, ճաշելու համար:

(Շարունակելի)

ԺԻՐԱՅՐ

ԱՅԺՄԵՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԹԱԳԱՌՈՐԸ

Սպաննոքեան եպիսկոպոս փոռճը որ եղաւ Եօրկիոս քաղաքին վրայ, քարեքայիսաքար առանց յարողեցու, օրումն կարեւորագոյն դէպքն է ոչ միայն Յունաստանի, այլ ամբողջ Եւրոպայի համար, ու ամեն ճեղ, արեւմտական շրջանակներու մէջ մանաւանդ, խորին յուզում եւ ցաւ կը պատճառէ: Խընդակցական առաջին հեռագիրները, քաղաւորին կեանքը փրկուելուն համար, ուղղուած են Զարին, Վիլհելմ կայսեր ու Վիգորիս քաղաքին կողմէ: Աթենքի ժողովուրդը եւ ռանդագին ցոյցերով համակրանք կարճաժամ իր վեհապետին նկատմամբ ու օտար երկիրներու հեղինակ գաղափարներուն նոյն զգացումով համակրած հեռագիր հեռագրի վրայ կը ճեղացունեն: Գոհաբանական աղօթքներ կը մատուցուին օրօփն եկեղեցիներուն մէջ, Աթենքի մայր եկեղեցիին սկսելով:

Ընդհանուր կերպով սա կարծիքը կարճաժամ, Յունաստանի գործերուն վրայ

շարաւեղեակ սկումբներու մէջ ու քերթերու կողմէ, թէ այս սպաննոքեան փոռճ անուղղակի կերպով արդիւնք է այն թշնամական ու գրգռիչ հրահարակոթիւններուն զորս արհայական ընտանիքին հակառակորդ շրագիրներ կընեն Աթենքի մէջ, յոյներուն պարտութիւնը, թուրքերուն յաղթանակը, երկրին ճնշեալական թագաւոր, ամեն բան քաղաւորին վերագրելով:

Թագաւորը, զիսկալով հանդերձ թէ իր դէմ դաւադրութիւն մը կը պատրաստուի, չեւզեր որեւէ զգուշական միջոց ձեռք առնել ու իր սովորութիւններէն շեղիլ, — ինչ որ կապացուցանէ ոչ միայն իր խղճին հանդարտութիւնը, այլեւ իր արիւնքի վեհապետի հանգամանքը: Փոխանակ յորս պատմէ մէջ փակուելու եւ զինուորներով պաշարուելու, քայց կառնով պոչոյի ելեր է պարզ քաղաքացիի մը պէս, արհամարհելով ամեն երկիրը:

Այս եղեռնական փոռճին հեղինակները ու քեղարիւնները ուրիշ բան քրած չեղան քայց երբ նոր թագաւորներու եւ նոր յուզումներու մատնել երկիրը, ճիշդ այն միջոցին ու երեւակաւ ինքնուրոյն հաստատման իջ մը շունչ պիտի առնէր ու ինքնամիտութեամբ պիտի դարձանէր լեռնային պատերազմէն կրած աղէտները: Ահա՛ այդ դաւադրագի մարդերու ընթանած ազգասիրութիւնը:

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

ԵՐԿԻՈՍ ԹԱԳԱՌՈՐԸՆ ՎՐԱՅ

Աւափի կիրակի առաւօտէն ի վեր Աթէնքէն յաջորդաբար հասած հեռագրական մանրամասնութիւնները:

Դէպքը պատահեցաւ շաբաթ, յետ միջօրէի: Եօրկիոս թագաւորը իր կրտսեր աղջկան՝ Մառի իշխանուհիին հետ, բայց կառքով պըտոյա մը ընելու գացած էր Ֆալէրի ծովեզրը. քաղաք վերադարձին, երկու մարդեր որոնք ճամբուն վրայ կը սպասէին, հրացանի վեց հարուած պարպեցին կառքին վրայ. թագաւորը մեծ քաջութիւն ցցուց, կառքին մէջ ոտքի ելլելով ու իր աղջկը պաշտպանելով. մինակ, արքունական հետեւորդներէն մէկը վիրաւորուեցաւ:

Թագաւորը ու Մառի իշխանուհին քաղաք վերադարձան ողջ առողջ վիճակի մէջ ու շատ հանգարտ երեւոյթով: Աթէնքի ժողովուրդը ցնծագին համակրանքով սղլունեց զանոնք և գիշերը, հազարաւոր մարդիկ արքայական պալատին շուրջը խմբուելով, «կեցցէ՛» գոչեցին ու համակրական ցոյցեր ըրին: Եւ զեռնական փորձը ընդհանուր զայրոյթ պատճառած է երկրին մէջ:

Կիրակի առաւօտ դոհարանական հանդիսաւոր աղօթքներ կարդացուեցան մայր եւ կեղեցիներ մէջ. ներկայ էին թագաւորն ու թագուհին: Իրիկուան կողմ, Օգոստոսիա ամիսը կառքով պտոյա մը ըրաւ. անհամար բազմութիւն խնուած էր անոնց ճամբուն վրայ և կեցցէներով կողմունէր:

Աթէնքի դեսպանները այցելութեան գացին թագաւորին. շերմագին զգացումներ ար-

տայայտող հեռագիրներ հասան Ջարին, Գերմանիոյ կայսեր ու Անգլիոյ թագուհւոյն կողմէ։ Բաղաքը հանգարտ է։

* *

Երկուշաբթի օրը հեղին ոստիկանութիւնը ձերբակալեց Եօրկի Բարտիճի անուն երիտասարդ մը որ երկրորդական պաշտօնեայ մըն է Աթէնքի թաղապետութեան մէջ։ Բարտիճի խոստովանեցաւ թէ ինքն էր թագաւորին վրայ հրացան պարպողը, ըսյց չուզեց իր մեղսակիցներուն անունը տալ։ Պինդ-գլուխին մէկն է Բարտիճի, արքայական գերդաստանին հակառակորդ թերթերու հրատարակութիւններէն զրգուռած։ Հարցաքննութեան միջոցին մինչեւ իսկ ցաւ յայտնեց հարուածը վրիպած ըլլալուն համար։ Գաղտնի ընկերութեան մը կը պատկանի որ որոշած է եղեր թագաւորը սպաննել այն միջոցին երբ միջազգային քոնգրէսը ծրագիրը քուէարկուէր խորհրդարանին կողմէ։

* *

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ ՇԵՌԱԳԻՐ

Աթէնք, 1 մարտ. — Ոստիկանութիւնը ձիորճիօ անուն Մակեդոնացի մը բռնեց, որ խոստովանեցաւ Բարտիճիի մեղսակից ըլլալը։ Ամբողջ Յունաստանի մէջ կը շարունակուին համակրական ցոյցեր ի պատիւ թագաւորին։ Խնդակցական անհամար ուղերձներ կը հասնին պալատը։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԾԵՐ

Կ. Պոլսէն կը հաղորդեն եւրոպական թերթերուն թէ Սուլթանը հրամայեց է Համիտիէ նոր հեծելազուններ կազմակերպել զաւառներուն մէջ։

—Հռոմի պաշտօնական շրջանակներուն մէջ կը հերքուի այն լուր թէ Իտալիա յանձն առած ըլլայ Անգլիոյ հետ մէկտեղ կազմակերպել Կրէտէի վարչութիւնը։ Իրաւ է թէ ինքը փափագող է կրէտական խնդրին կարգադրութեան, առանց սակայն մասնաւոր պատասխանատուութիւն մը ստանձնելու, որպէս զի եւրոպական համաձայնութիւնը խանգարելու պատճառ չըլլայ։

—Կրէտէի կառավարչութեան պաշտօնին համար ընտրելիներուն շարքը չի լնցուցաւ դեռ։ Հիմակ ալ կըսուի թէ Պուլկարիոյ Ֆէրտինանտ իշխանին հօրեղբորորդի Ուիթօլտ Ջարթօրիսքի իշխանին տրամադրութիւնը իմանալ ուղուեր է այդ պաշտօնին համար։

—Թաւ կիմանայ թէ Թուրքիոյ ելմտական նախարարութիւնը, հանրային պարտուց վարչութեան միջոցաւ վճարեր է պատերազմական փոխադրութեանց հաշուէն երկաթուղոյ բոլոր ընկերութիւններուն պահանջքը որ կը հասնի 600,000 ոսկիի։

Միւս կողմէ, նոր կանխավճար մը ուղեր է Պանք Օթօմանէն, ի հաշիւ Յունաստանի պատերազմական տուգանքին, որ մերժուեր է։

ՁՕԼԱԻ ԴԱՏԸ

Թէեւ Ջօլա դատապարտուեցաւ, սակայն միտքերը զրգուռած կը մնան միշտ Թրանսայի մէջ, թեր ու դէմ հակառակ հասանքներ իրարու բաղխելով։ Բարիզէն Իտալիոյ թերթերուն ուղղուած տեղեկութեան մը նայելով,

արտաքին գործոց նախարար Պ. Հանօթօ՝ դեսպաններու հետ իր ունեցած զանազան տեսակցութեանց միջոցին զգացունել տուեր է թէ, երկրին մէջ հանգարտութիւնը տիրելուն պէս՝ Տրէֆիւսի դատը պիտի վերաքննուի։

—Պէրլինի թերթերը սքանչացում կարտայայտեն այն ինքնապաշտպանութեան ճառին նկատմամբ զոր եղեռնագատ ատենի վերջին նիստին մէջ կարգաց Ջօլա։ Բոլորովին համոզիչ կը գտնեն զայն, և տրամաբանութեան ու ոճի հրաշակերտ մը։

—Բէզրասպուրկի բոլոր փաստաբանները շնորհաւորական հեռագիր մը ուղղեցին Ջօլաի ու իր փաստաբանին։

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Վեհափառ Կաթողիկոսը որ Մոնունդի տունը Թիֆլիզ անցուցած էր, փետրուար 16ին Պագու ուղեւորեր է, ուր քանի մը օր պիտի մնայ՝ քաղաքին ազգայնոց խնդրանք։

Արմէնիա զրոյց մը կը յիշէ թէ Ռուսիոյ Կայսրը ունկնդրութեան համար Բեզրասպուրկ հրաւիրեր է ամենայն Հայոց Հայրապետը։

Գաղթային կեանքի տառապանքներու նոր զոհ մըն ալ, Երէկ, Մարմինայի ազգ. գերեզմանատունն հողին յանձնեցին տանընդ տարեկան Պոլսեցի երկուստարգ մը, Լեւոն Պէրպլեան, լինի խոսքեղցի, որ այդ գիւղի ահուկ կոտորածէն մազապուր ճողոված՝ Ամերիկա ապաստանած էր։ Իր կրած սարսափը ու օտար երկրի դառնութիւնները սակայն անողորմ հիւանդութեան մը մատնած էին զինքը, և քանի մը շաբաթ առաջ Եգիպտոս եկած էր կաղզուրում՝ գտնելու յոյսով։ Հայրը՝ Տիար Հեթում՝ Պէրպլեան՝ փութացած էր Պոլսէն ձամբայ ելլել իր որդւոյն քով գալու, սակայն արդէն իսկ մահամերձ գտաւ զայն։ Վաղամեա երիտասարդին յուզարկաւորութիւնը կատարուեցաւ զգածուի բարեկամներու ներկայութեամբ։ Առաջն. Տեղապահ Հայրը, որ երբեմն վարած է խոսքեղի բարոյչութիւնը, սգակիր հետեւեցաւ դագաղին, իրեն վաղածանօթ բարեկամ Պէրպլեան ընտանիքին։

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Տիար Հէթում Պէրպլեան իր խորին շնորհակալքը կը յայտնէ ամեն անոնց որ հաճեցան ներկայ գտնուիլ իր վաղամեռ որդւոյն յուղարկաւորութեան, և իրենց ցաւակցական զգացմանց հաւաստիքը տուին այս տխուր առթիւ։

ՏԵՂԱԿԱՆ

Նախարարները ու ելմտական խորհրդականը երէկ գումարում մը ունեցան որուն շարժառիթ կը կարծուի Սուտանի վերաբերող հեռագիր մը որ սէրտար Բիշնէր փաշայի կողմէ պատերազմական պաշտօնատունն հասած էր։

—Կը հերքուի տեղական լրագրի մը այն լուրը թէ Էզպէթէի հանրային պարտեզը անգլիական ընկերութեան մը ծախուելու վրայ է։

—Անգլիոյ թագուհւոյն երկրորդ որդին՝ Սաքս Գալուրի դուքսը որ ամիս մը Հէլուան անցուց օգափոխութեան համար, երէկ իրիկուն Աղեքսանդրիայէն մեկնեցաւ Սըրքսայց մարտանաւով։

—Կիրակի օրը 150 ամերիկացի ու գերմանացի թուռիսթներ հասան Գահիրէ։ Ասոնք Նօրմանիա շոգենաւով Աղեքսանդրիա եկած էին նոյն առաւօտուն։ Մօտ օրերս կը սպասուի նաեւ Լոյտի Տալմէն շոգենաւը զոր աւստրիացի, գերմանացի ու շուէտացի թուռիսթներ վարձած են զբօսական պտոյտի համար և Կ. Պոլսէն կուգան։

—Գահիրէի և Աղեքսանդրիոյ հեղինակական հիւպատոսները, ինչպէս նաեւ հեղինակաւորութեանց ներկայացուցիչները ինքզինքան հեռագիրներ ուղղեցին Եօրկիոս թագաւորին, կեանքը փրկուելուն համար։ Թէ՛ Գահիրէի և թէ՛ Աղեքսանդրիոյ յունական եւ կեղեցիներուն մէջ գոհարանական աղօթքներ պիտի մատուցուին վաղն առաւօտ։

Ի պատասխանի Եգիպտոսի հեղին գիււանագիտական գործակատար Պ. Կրիբարիսի հեռագրին, Եօրկիոս թագաւորը պատասխանեց է սապէս «Անկեղծ շնորհակալութիւններս՝ ձեր բարի խօսքերուն համար»։ Միւս հեռագիրներուն պատասխանած է նախադաս պետ Պ. Ջայիմիս։

—Կիզէի ոստիկանութիւնը Նեյրոսի եղերքը նետուած գտաւ կնոջ մը դիակը որուն մարմինը բռնութեան նշաններ կը կրէր։ Բռնչկական քննութեամբ հաստատուեցաւ որ ոճրի մը արդիւնք էր այս կնոյ՝ մահ։ Ջարագործը կամ չարագործները վնասուելու վրայ են։

—Դատական խորհրդական Սըր Ճոն Արթ վերագարձաւ իր քննական պտոյտէն։

—Սիֆորթ Հայլանտը սկսեց փական վաշտը որ Գահիրէի անգլ. զօրաբանակին մաս կը կազմէ, այս առաւօտ Ասուան ուղեւորուեցաւ։

—Մակակաի մէջ գործուած ոճրին հետեւանօք՝ ինք հոգի ձերբակալուած են որոնք դատական իշխանութեան յանձնուեցան։

—Աղեքսանդրիոյ փաստաբաններէն Պ. Ալէքսանդրի ուսումնասիրութիւն մը հրատարակած է Ռեֆօրմի մէջ, առաջարկելով որ հողերու վաճառման տուրքը որ 100ին 5 է, հարկերին կէսի իշուցուի։ Եգիպտոսի մշակական հողերուն ընդհանուր արժէքը 600 միլիոն ոսկի ըլլալով, կըսէ, կառավարութիւնը հողատէրերուն 30 միլիոն ոսկիի չահ մը ընծայած պիտի ըլլայ, այս տեսակ զեղչ մը ընդունելով։

—Հանրօգուտ շինութեան պաշտօնատան հաշուակալութեան դիւանին քննիչ Պ. Օրիվիէ որ դատի ենթարկուած էր՝ իր վրայ ծանրացող ամբաստանութեան մը պատճառաւ, անպարտ արձակուելով վերստանձնեց իր պաշտօնը։

ՀՈՍԿԷ ՀՈՆԿԷ

Ամերիկայի Օհիօ նահանգին օրէնսդրական ժողովին շատ բանաւոր ծրագիր մը ներկայացուեր է որուն նպատակն է առողջ սերունդներ պատրաստել, ամուսնանալ ուղղուններ, երկու սեռէ հաւասարապէս, բժշկական յատուկ յանձնաժողովի մը քննութեան բովէն անցընելով։ Այս յանձնաժողով մանրամուտ նաբար պիտի տեղեկանայ ամուսնանալիք երիտասարդին կամ օրիորդին ծնողաց անցեա-

ին, թէ մէջերն ժառանգական հիւանդու-
թիւն, արեքցութիւն, արեան ապականութիւն
և այլն ունեցած են և թէ «ընտրելին» ինքն
իսկ զե՛րծ է ատոնցմէ : Քննութիւնը բարո-
յական ու ֆիզիքական տեսակէտներով մի-
անգամայն պիտի կատարուի և երբ գոհա-
ցուցիչ արդիւնք տայ, այն ատեն արտօնագիր
մը պիտի յանձնուի (որուն սակագինն է 2 1/2
ֆրանք) առանց որու անկարելի պիտի ըլլայ
որեւէ ամուսնութիւն կնքել նահանգին մէջ :

Ֆրանսայի գեղարուեստից Ակադեմիին
նախագահ Պ. Ֆրէմիէ աւարտեր է մեծագիր
օրինակն այն հոյակապ արձանին զոր Սիւէզի
ընկերութիւնը պիտի կանգնէ ի յիշատակ
Ֆէրտինան տը Լէսէբի : Օրինակին վերջին
մասերը յանձնուած են ձուլիչներուն որոնց
աշխատութիւնը կաւարտի քանի մը շաբա-
թէն, որմէ ետք արձանագործը պիտի սկսի :
Լէսէբա ներկայացուած է ոտքի վրայ, ուղտի
ստեւէ վերարկու մը առած վրան, ինչպէս
սովորութիւն ունէր կրել Եգիպտոս բնակած
միջոցին : Ձախ ձեռքը բռնած է ջրանցքին
յատակաձեւը ու աջովը ջրանցքին մուտքը
ցոյց կուտայ : Արձանը պիտի կանգնուի տա-
տաներկու մէջը բարձրութեամբ պատուան-
դանի մը վրայ, ուր պիտի նկարուի խոշոր
մէտալիոն մը, դափնիներով ու առիւծի մոր-
թով պատուած, որուն մէջտեղ պիտի նկար-
ուին կիսագէմքերն այն խորհրդներուն որոնք
նպաստեցին Լէսէբի աշխարհաշէն ձեռնար-
կութեան :

Նիւ Եօքի բանտին մէջ Սէյմուր անուն
մարդ մը կը գտնուի, ձիւ գողութեան հա-
մար բանտարկուած, որ այն տեսակ խոր ու
երկարատեւ քունի մը մէջ թաղուած է ուս-
կից անկարելի կըլլայ զինքը արթնցնել : Բը-
ժիշկները փորձեր են սթափեցնել զայն երեք-
տրական այնպիսի սաստիկ հոսանքի մը միջո-
ցաւ որուն չի պիտի դիմանար սովորական
վիճակի մէջ գտնուող մարդ մը : Բայց Սէյ-
մուր թեթեւ ցնցումի մը նշանները միայն ցոյց
տուեր է, և ան ալ դադարէր է, հոսանքը
դադարելուն պէս :

Թիշկները կը խորհին թէ իրենց զմեռ
ենթարկուած է և այս տեսակէտով գիտական
նոր փորձ մը պիտի կատարեն անոր վրայ :

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Յարուբիւն Հալաբեան պատիւ ունի ծանուցա-
նել իր բազմաթիւ յանձնարարներուն քէ իր կօշկա-
կարի խանութը Պազար Մուրուէն փոխադրած է
Քաֆէ Էմիլիէի դիմացի կարգը՝ կազմ ընկերու-
թեան կեդրոնին մօտի բաւաժին մէջ, գեթալարի,
թիւ 6 :

Ձեռաւոր ու ընթիւ կօշիկներու պատրաստու-
թիւն արանց եւ կանանց համար, դիւրամասշտի
գնեցով :

ԿՕՇԿԱԿԱՐ

ՅՈՂԱՆՆԵՐԻ ՂԱԶԱՐԵԱՆ

ԳԱՀԻՐԷ. Եգիպտի փողոց Էլօրաուդի դիմ

Հաշակաւոր պատրաստութիւն արանց և կա-
նանց կօշիկներու :

Ապրանքի ընտրութիւն, տոկոսութիւն և գո-
հացուցիչ պայմաններ :

Գներու չափաւորութիւն :

3-4

ՍԱՓՐԻՉ

ՕՇԱՆՆԵՍ ՊԵՅԼԵՐԵԱՆ

Պոլսոյ ճարտար սովորչներէն Օհաննէս
Պէյլէրեան որ մէկ ու կէս տարիէ ի վեր Գա-
հիւրէ հաստատուած է և մեծապէս գոհ թու-
ղացած իր յանձնարարները, այս անգամ իր
նոր խանութին մէջ (Աթապա էլ Խատրա,
Թրամուէյի կայարանին դէմ) ամեն գիւրու-
թիւն ու հանգստաւէտութիւն կընծայէ մաք-
րութիւն, արագութիւն ու վայելչութիւն թէ
ածիւման և թէ վարսայարգարութեան մասին :

ՖՈՐՕԿՐԱՖԻ ԷՃԻԲՍԻԷՆ

Ք. ՊԻԻՔՄԷՃԵԱՆ

ՇԱԱ ՄՈՒՀԱՄԷՏ-ԱԼԻ ԹԻԻ 120

Արհեստին վերջին կատարելագործու-
թեան համեմատ հաստատուած այս լուսանը-
կարչատան մէջ ամեն տեսակ լուսանկարներ
կը հանուին գոհացուցիչ գիներով :

Ամեն մեծութեան ԱԿՐԱՆՏԻՍԸՄԱՆԵՐԻ
10 — 10

PHARMACIE DE LA POSTE

ԴԵՂԱՐԱՆ Ե. ԱԻՍԳԵԱՆ

ԳԱՀԻՐԷ, ՓՕՍԹԱՅԻ ՇՐԱՊԱՐԱԿ. ՄԱՍՏԹԻՍԻ ԱՊԱՐԱՆՔԻՆ ՏԱԿ

Այս նորահաստատ դեղարանին մէջ յաճախորդ-
ները պիտի գտնեն եւրոպական լաւագոյն գործա-
լաններէն ընտրած թարմ դեղեր, չափաւոր գիներով :
Դեղագիրները ամենայն խնամք և ուշադրու-
թեամբ կը պատրաստուին :

Անգլիական և ֆրանսական սքեսիալիքներ :
Թարմ հաճախից ջուրեր, անուշահոտութիւններ,
նոսրածական և մանրադիտական քննութիւնք :
Դեղարանաւ կը յաճախեն հայ և օտարազգի ծա-
նօթ բժիշկներ :

Բժշկական ձրի խորհրդածութիւնք աղքատաց
համար : 30—50

ԼՈՒԱՅԱՐԱՐ ԵՒ ԱՐԴՈՒԿԻՉ

Մ. ՏԵՐ ՍԱՀԱԿԵԱՆ

ԺԱՌՏԷՆ ՌՕՍԷՐԹԻ, ՇՐԱՆՏ ԱԶՍԵԱՆԻ ՆԱԿԻՆ ԽԱՆՈՒԹԸ

ԿԸ ԼՈՒԱՅ ամեն տեսակ ճերմակեղէններ
ու հագուստներ. ԿԱՐԴԻԷ արանց և կանանց
չապիկներ, շրջագետտներ, եւն. մաքրութիւն,
ճշգրտահաշիւութիւն, և խիստ չափաւոր գին :
24—24

Le Gérant: D^r. A. S. HAGOPIAN

Տպագրութիւն ՓԱՐՈՍ լրագրի

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷՆ ԱԶԵՄԱՆԳՐՈՅ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Խառն 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	Էքսպրէս 1, 2 կգ.	օմնիպ. 1,2,3,4գ.	Էքսպրէս 1, 2 կգ.	օմնիպ. 1 2 3 կարգ	օմնիպ. 1 2 3 կարգ
Գահիրէ	մեկ. 4 45	առտ. —	առտ. 7 30	առտ. 8 15	առտ. 9 30	երեկ. 3 30	երեկ. 4 45	երեկ. 7 15	երեկ. 11 —
Պէնհա	ժամ. 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	մեկ. 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
	մեկ. 11 48	6 —	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տամանհուր	ժամ. 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ալէքսանդրիա	ժամ. 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱԶԵՄԱՆԳՐՈՅԷ ԳԱՀԻՐԷՆ ԳԻԾ

Կ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	օմնիպ. 1,2,3,4գ.	կէս ուղ. 1,2,3,4գ.	օմնիպ. 1,2,3,4գ.	Էքսպրէս 1 2 կգ.	Խառն առտ.	օմնիպ. 1,2,3,4գ.	Էքսպրէս 1 2 կգ.	օմնիպ. 1 2 3 կարգ	օմնիպ. 1 2 3 կարգ
Ալէքսանդրիա	մեկ. —	առտ. 7 —	առտ. 7 15	առտ. 9 —	առտ. 9 20	երեկ. 2 30	երեկ. 4 15	երեկ. 6 15	երեկ. 11 —
Տամանհուր	ժամ. —	առտ. 8 6	առտ. 8 58	առտ. 10 2	առտ. 12 14	երեկ. 4 13	երեկ. 5 15	երեկ. 8 6	երեկ. 1 9
Թանթա	մեկ. —	առտ. 9 12	առտ. 10 28	առտ. 11 —	առտ. 2 39	երեկ. 5 43	երեկ. 6 10	երեկ. 9 40	երեկ. 2 56
	մեկ. 6 15	առտ. 9 16	առտ. 11 20	առտ. 11 5	առտ. 2 49	երեկ. 6 30	երեկ. 6 14	երեկ. —	երեկ. 3 6
Պէնհա	մեկ. 7 18	առտ. 9 59	առտ. 12 23	առտ. 11 46	առտ. 4 43	երեկ. 7 33	երեկ. 6 52	երեկ. —	երեկ. 4 25
Գահիրէ	ժամ. 8 30	առտ. 10 45	առտ. 1 35	առտ. 12 30	առտ. 6 25	երեկ. 8 45	երեկ. 7 35	երեկ. —	երեկ. 5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԻԷՉ

ՊԵՆՀԱՅԻ ՃԱՄԲԱՅ

ՍԻԻԷՉ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՌՑ	ԵՐԵԿՈՅ
Գահիրէ	մեկ. 11 40	7 —	Սիւէզ (քարափ)	մեկ. 9 50	—
Պէնհա	ժամ. 12 28	7 48	Նիս	—	3 30
	մեկ. 12 33	7 53	Խամպիլա	ժամ. 1 20	7 5
Ջակադիկ	ժամ. 1 34	8 54	Ջակադիկ	մեկ. 3 7	8 53
	մեկ. 1 44	9 4		մեկ. 3 17	9 3
Խամպիլա	մեկ. 3 40	1 —	Պէնհա	ժամ. 4 13	9 47
Սիւէզ կայարան	ժամ. —	5 —		մեկ. 4 17	9 4
Տօք (քարափ)	ժամ. 6 55	—	Գահիրէ	ժամ. 5 5	10 35